

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-268 օրենքի (այսուհետ օրենք) 10-րդ հոդվածում՝

- 1) 2-րդ կետի 2-րդ նախադասությունից հանել «միություն» բառը:
- 2) 6-րդ կետը շարադրել նոր խմբարությամբ.

«6. Կազմակերպության գտնվելու վայրը՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնին իրավաբանական անձի կողմից պաշտոնապես հայտնաձև իրավաբանական անձի մշտապես գործող մարմնի գտնվելու վայրն է:»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածում.

- 1) 1-ին կետի 5-րդ ենթակետում՝ «և բովանդակությունը» բառերը փոխարինել «, իրավասությունների շրջանակը» բառերով.
- 2) 5-րդ կետից հանել «նույն բնակավայրի սահմաններում» բառերը:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածում.

- 1) 2-րդ կետում «երկու տարին» բառերը փոխարինել «չորս տարին» բառերով.
- 2) 3-րդ կետի 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Արտահերթ ժողով կարող է հրավիրվել նաև բարձրագույն մարմնի կողմից ձևավորված ղեկավար մարմինների (այդ թվում՝ միանձնյա) նախաձեռնությամբ:»

- 3) 6-րդ կետի 1-ին ենթակետում՝ «(եթե այն չի հաստատել հիմնադիրների ժողովը)», բառերը հանել, իսկ 3-րդ ենթակետի «այդ թվում՝» բառերից հետո լրացնել՝ «առանց լիազորագրի կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և» բառերով:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետում.

- 1) 4-րդ ենթակետում «երկու տարին» բառերը փոխարինել «չորս տարին» բառերով.
- 2) 8-րդ ենթակետում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Կազմակերպության գտնվելու վայրի փոփոխության դեպքում ներկայացվում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի դիմումը կազմակերպության նոր գտնվելու վայրի գրանցման մասին:»:

3) լրացնել նոր 9-րդ ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝

«9) կազմակերպության բարձրագույն մարմնի կողմից ձևավորված գործադիր մարմինը պարտավոր է յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ իր պաշտոնական ինտերնետային կայք էջում հրապարակել կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման (ստացված և ծախսած միջոցների) վերաբերյալ տեղեկատվություն (այսուհետև՝ տեղեկատվություն): Տեղեկատվության մեջ պետք նշվեն կազմակերպության կողմից ստացած բոլոր եկամուտները (այդ թվում՝ անդամավճարները) և այլ մուտքերը, դրանց ստացման աղբյուրները, մեկ միլիոն դրամից ավելի արժողությամբ կատարված բոլոր գործարքները՝ ներառյալ շարժական և անշարժ գույքի առքն ու վաճառքը, տվյալ տարվա ընթացքում կազմակերպության անդամների քանակը, կազմակերպության ղեկավար մարմիններն ու ղեկավար մարմիններում պաշտոններ զբաղեցնող անձանց անուններն ու ազգանունները, ղեկավար մարմինների կազմում տարվա ընթացքում կատարված փոփոխությունները:

Կազմակերպության կողմից իր պաշտոնական կայք էջում տեղեկատվությունը հրապարակելու դեպքում այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է պետական լիազոր մարմին՝ նշելով կազմակերպության կայք էջի անվանումը: Պաշտոնական ինտերնետային կայք էջ չունենալու դեպքում տեղեկատվությունը սույն ենթակետով սահմանված ժամկետում ներկայացվում է պետական լիազոր մարմնին՝ լիազոր մարմնի համապատասխան կայք էջում հրապարակելու համար: Տեղեկատվության ձևը սահմանում է պետական լիազորված մարմինը:

Եթե կազմակերպությունը սահմանված ժամկետում չի հրապարակում տեղեկատվությունը կամ հրապարակած տեղեկատվությունը պարունակում է ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ էական սխալներ, ապա տվյալ կազմակերպության յուրաքանչյուր անդամ կամ մարմին կամ պետական լիազորված մարմինը, իրենց նախաձեռնությամբ կարող են կազմակերպությունը ճշգրիտ տեղեկատվություն հրապարակելու պահանջ ներկայացնել:

Եթե տեղեկատվություն հրապարակելու պահանջ ներկայացնելուց հետո մեկ ամսյա ժամկետում տեղեկատվությունը չի հրապարակվում, ապա պահանջող կողմը տեղեկատվությունը հրապարակելու պահանջով կարող է դիմել դատարան:

Կազմակերպության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ծանոթանալ կազմակերպության ցանկացած փաստաթղթի՝ այդ մասին կազմակերպության համապատասխան իրավասու մարմնին դիմելուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: